ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., դոցենտ Կարեն Հեկտորի Սարդարյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց ՝ Գույքային իրավունքներ» (Property rights)

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան Գույքային իրավունքներ» (Property rights)

«Իրային իրավունք» դասընթացը նվիրված է քաղաքացիական իրավունքի շրջանակում իրային իրավունքների համակարգի ուսումնասիրությանը՝ շեշտադրելով կորպորատիվ ասպեկտները։ Դասընթացում ուսումնասիրվում են իրային իրավունքի հիմնական ինստիտուտները (սեփականության իրավունք, տիրապետում, սահմանափակ իրային իրավունքներ)՝ իրավաբանական անձանց գործունեության համատեքստում։
Հատուկ ուշադրություն է դարձվում կազմակերպությունների գույքի իրավական ռեժիմին, կորպորատիվ անշարժ գույքին և գույքային իրավունքների իրացման առանձնահատկություններին։ Ուսումնասիրվում են սեփականության և այլ իրային իրավունքների առաջացման, իրականացման, փոխանցման, սահմանափակման և դադարեցման մեխանիզմները, ինչպես նաև դրանց պաշտպանության ձևերը։
Դասընթացը ունի կիրառական ուղղվածություն՝ հիմնված գործնական իրավիճակների, քեյսերի և դատական պրակտիկայի վերլուծության վրա։
Դասավանդվում է մագիստրատուրայի 1-ին կուրսում։
Գնահատման ձևերը՝

- ընթացիկ գնահատում՝ գործնական առաջադրանքներ, սեմինարների մասնակցություն, նախագծեր, թեստեր
- միջանկյալ ստուգում՝ առաջին մոդուլի ավարտին (ստուգարք կամ գրավոր աշխատանք)
- եզրափակիչ գնահատում՝ քննություն։

Դասընթացը հիմնվում է քաղաքացիական իրավունքի հիմունքների և ընդհանուր իրավաբանական տեսության վրա։ Այն սերտորեն կապված է «Կորպորատիվ իրավունք» և «Ձեռնարկատիրական իրավունք» դասընթացների հետ։
Ստացված գիտելիքները կիրառելի են նաև հետևյալ ոլորտներում՝ պայմանագրային իրավունք (անշարժ գույքի գործարքներ, գրավ), հողային իրավունք, հարկային իրավունք (կորպորատիվ գույքային հարկեր) և այլ փոխկապակված ոլորտներ։ Դասընթացը կարևոր է նաև պրակտիկայի անցման և ավարտական աշխատանքի համար։

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակը մագիստրանտների մոտ ձևավորելն է իրային իրավունքների վերաբերյալ համակարգային գիտելիքներ քաղաքացիական իրավունքում և զարգացնել

դրանց կիրառման հմտությունները կորպորատիվ իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ:

Նպատակին հասնելու համար առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- իրային իրավունքի տեսական հիմքերի յուրացում (հասկացություններ, սկզբունքներ, համակարգ),
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրություն՝ սեփականության և այլ իրային իրավունքների վերաբերյալ, ներառյալ անշարժ գույքի և իրավաբանական անձանց գույքի հատուկ կարգավորումները,
- կազմակերպությունների կողմից իրային իրավունքների իրականացման առանձնահատկությունների վերլուծություն (ներառյալ պետական և համայնքային ունիտար ձեռնարկությունները),
- գործնական հմտությունների զարգացում՝ իրային իրավունքների ձևակերպումից և գրանցումից մինչև դատական պաշտպանություն,
- իրավական խնդիրների լուծման, ինչպես նաև գույքային հարաբերություններին առնչվող պայմանագրերի և դատավարական փաստաթղթերի կազմման հմտությունների զարգացում:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը՝

քաղաքացիական իրավունքի շրջանակում ծագող գույքային հարաբերություններն են, որոնք կապված են իրերի նկատմամբ իրավունքների առաջացման, իրականացման և պաշտպանության հետ, հատկապես կորպորատիվ ոլորտում:

Դասընթացի առարկան՝

իրային իրավունքների համակարգը, դրանց իրավական կարգավորումը, տեսակները և կիրառման մեխանիզմները, ինչպես նաև իրավաբանական անձանց գույքի իրավական ռեժիմի առանձնահատկությունները և իրային իրավունքների իրացման ու պաշտպանության պրակտիկան:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացը յուրացնելու համար ուսանողը պետք է ունենա քաղաքացիական իրավունքի հիմունքների վերաբերյալ նախնական գիտելիքներ: Մասնավորապես՝

- տիրապետի իրավունքի տեսության հիմնական հասկացություններին (իրավունքի աղբյուրներ, իրավահարաբերություններ, իրավաբանական փաստեր),
- ունենա բակալավրիատի մակարդակով գիտելիքներ քաղաքացիական իրավունքի ոլորտում՝ հատկապես սեփականության իրավունքի և պարտավորությունների հիմունքների վերաբերյալ,
- պատկերացում ունենա իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի և գործունեության մասին,
- կարողանա աշխատել նորմատիվ իրավական ակտերի և դատական ակտերի հետ, կատարել դրանց վերլուծություն,
- տիրապետի իրավաբանական գրավոր խոսքի և պարզ իրավական փաստաթղթեր կազմելու տարրական հմտություններին։

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. իրային իրավունքի համակարգը, հիմնական ինստիտուտները և սկզբունքները,
2. սեփականության և այլ իրային իրավունքների իրավական կարգավորումը, այդ թվում՝ կորպորատիվ գույքի իրավական ռեժիմը,
3. իրային իրավունքների վերաբերյալ օրենսդրության և դատական պրակտիկայի հիմնական մոտեցումները։

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. Մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանն իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու հմտություններ:
2. իրային իրավունքի նորմերի կիրառումը կորպորատիվ գույքի կառավարման և պաշտպանության կոնկրետ իրավական խնդիրների լուծման համար,
3. իրավաբանական փաստաթղթերի (պայմանագրեր, հայցադիմումներ, իրավական եզրակացություններ) պատրաստում՝ կապված գույքային հարաբերությունների հետ։

ընդհանրական իմացական հմտությունները՝

1. իրավական վերլուծություն և քննադատական գնահատում (օրենսդրության և դատական պրակտիկայի համադրությամբ),
2. իրավական խնդիրների համակարգային ընկալում և հիմնավորված փաստարկման կառուցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. ինքնուրույն իրավական դիրքորոշման մշակում և մասնագիտական որոշումների ընդունում կորպորատիվ գույքի կառավարման ոլորտում,
2. պատասխանատվություն իրավաբանական խորհրդատվության և իրավական գործողությունների հետևանքների համար՝ ապահովելով կազմակերպության գույքային շահերի պաշտպանությունը։

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացի դասավանդումը հիմնված է դասախոսությունների և ակտիվ ուսուցման մեթոդների համադրության վրա՝ ուղղված մագիստրանտների գործնական պատրաստմանը։

Դասախոսությունները կրում են խնդրակենտրոն բնույթ. ներկայացվում են ոչ միայն տեսական դրույթները, այլև վերլուծվում են վիճահարույց հարցեր, տարբեր գիտական մոտեցումներ և դատական պրակտիկայի օրինակներ։ Օգտագործվում են պրեզենտացիաներ, տեսողական սխեմաներ և լսարանի ներգրավման հարցեր։

Սեմինարներն իրականացվում են ինտերակտիվ ձևաչափով՝ քեյսերի վերլուծություն, խմբային քննարկումներ և դերային խաղեր, ինչը նպաստում է գիտելիքների կիրառմանը և իրավաբանական վերլուծության ու փաստարկման հմտությունների ձևավորմանը։

Կարևոր դեր ունի ինքնուրույն աշխատանքը. ուսանողներին տրամադրվում են առաջադրանքներ և մեթոդական ցուցումներ։ Ապահովվում է հետադարձ կապ՝ գրավոր աշխատանքների ստուգման, խորհրդատվությունների և էլեկտրոնային հաղորդակցության միջոցով։

Դասընթացը խթանում է քննադատական մտածողությունը և ուղղված է նրան, որ շրջանավարտը կարողանա արդյունավետ լուծել կորպորատիվ գույքի կառավարման և

պաշտպանության հետ կապված խնդիրներ՝ համադրելով տեսական գիտելիքները և գործնական հմտությունները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է “Գույքային իրավունքները (Property rights)»՝ 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2 ուսումնական տարվա 1 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**76**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**30**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**46**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**20**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**16**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Իրային իրավունքի հասկացությունը և համակարգը.	4	2	2

քաղաքացիական իրավունքների օբյեկտներ (իրեր)			
Թեմա 2. Սեփականության իրավունք. բովանդակություն, սուբյեկտներ, ձևեր. կորպորատիվ սեփականություն	4	2	2
Թեմա 3. Սեփականության իրավունքի ձեռքբերում և դադարեցում. կորպորատիվ գույքի ձևակերպում	4	2	2
Թեմա 4. Սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանություն	4	2	2
Թեմա 5. Սահմանափակ գույքային իրավունքներ. հասկացություն և տեսակներ	4	2	2
Թեմա 6. Սերվիտուտներ և անշարժ գույքի այլ ծանրաբեռնվածություններ կորպորատիվ ոլորտում	4	2	2
Թեմա 7. Իրային իրավունքներ ունիտար ձեռնարկություններում և հիմնարկներում	4	2	2
Թեմա 8. Գրավի (հիպոթեքի) և այլ ապահովման միջոցների կորպորատիվ ասպեկտներ	4	2	2
Ընդամենը	32	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Իրային իրավունքի հասկացությունը և համակարգը. քաղաքացիական իրավունքների օբյեկտներ (իրեր)

Ներկայացվում է իրային իրավունքի բնույթը, տարբերությունը պարտավորական իրավունքից, ինչպես նաև քաղաքացիական իրավունքների օբյեկտների դասակարգումը: Վերլուծվում է «իր» հասկացությունը, դրանց տեսակները (շարժական/անշարժ, բաժանելի/անբաժանելի և այլն), ինչպես նաև «իրի հետևման» սկզբունքը:

Թեմա 2. Սեփականության իրավունք. բովանդակություն, սուբյեկտներ, ձևեր. կորպորատիվ սեփականություն

Ուսումնասիրվում է սեփականության իրավունքի բովանդակությունը (տիրապետում, օգտագործում, տնօրինում), սուբյեկտները և ձևերը ՀՀ-ում (մասնավոր, պետական, համայնքային)։ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իրավաբանական անձանց գույքի ռեժիմին և կորպորատիվ սեփականությանը։

Թեմա 3. Սեփականության իրավունքի ձեռքբերում և դադարեցում. կորպորատիվ գույքի ձևակերպում

Քննարկվում են սեփականության իրավունքի առաջացման և դադարեցման հիմքերը, ինչպես նաև անշարժ գույքի իրավունքի գրանցման և գործարքների ձևակերպման առանձնահատկությունները։

Թեմա 4. Սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանություն

Ներկայացվում են գույքային-իրավական հայցերը (վինդիկացիոն, նեգատոր, ճանաչման հայց), դատական պրակտիկայի օրինակներ և բարեխիղճ ձեռքբերողի պաշտպանության հարցերը։ Ուսումնասիրվում են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերը։

Թեմա 5. Սահմանափակ գույքային իրավունքներ. հասկացություն և տեսակներ

Ներկայացվում են սահմանափակ իրային իրավունքների տեսակները ՀՀ օրենսդրությամբ (սերվիտուտ, հիպոթեք, օգտագործման իրավունք և այլն), դրանց իրավաբանական բնութագրերը և տարբերությունները սեփականության իրավունքից։

Թեմա 6. Սերվիտուտներ և անշարժ գույքի այլ ծանրաբեռնվածություններ կորպորատիվ ոլորտում

Քննարկվում է սերվիտուտի էությունը, հաստատման հիմքերը և կիրառությունը, ինչպես նաև այլ ծանրաբեռնվածություններ (հիպոթեք, կալանք, վստահված կառավարում) և դրանց պետական գրանցումը։

Թեմա 7. Իրային իրավունքներ ունիտար ձեռնարկություններում և հիմնարկներում

Վերլուծվում են հատուկ իրային իրավունքները՝ տնտեսական վարման և օպերատիվ կառավարման իրավունքները, դրանց բովանդակությունը և կիրառման պրակտիկան պետական և համայնքային կազմակերպություններում։

Թեմա 8. Գրավի (հիպոթեքի) և այլ ապահովման միջոցների կորպորատիվ ասպեկտներ

Ուսումնասիրվում է հիպոթեքը որպես ապահովման միջոց, դրա գրանցումը, պահանջների բավարարումը, ինչպես նաև այլ ապահովման գործիքներ (շարժական

գույքի գրավ, պահման իրավունք և այլն) և դրանց դերը կորպորատիվ գործունեության մեջ։

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Դասընթացը ապահովված է տեսական և կիրառական նյութերով, որոնք ներառում են հիմնական և լրացուցիչ գրականություն, դասախոսությունների նյութեր և էլեկտրոնային ռեսուրսներ։

Հիմնական գրականություն (դասագրքեր)

- Ախմետյանովա Զ. Ա. «Իրային իրավունք» – Մոսկվա, 2020
- Սուխանով Ե. Ա. «Իրային իրավունք» (գիտաճանաչողական ուսումնասիրություն) – Մոսկվա, 2024

Լրացուցիչ գրականություն (ուսումնական ձեռնարկներ)

- Աֆանասև Ի. Վ. «Իրային իրավունք. սերվիտուտ» – Մոսկվա, 2021
- Բելով Վ. Ա. «Իրային իրավունքի ուրվագծեր» – Մոսկվա, 2020

Դասախոսությունների նյութեր

Դասընթացի շրջանակում օգտագործվում է Կ.Հ. Սարդարյանի հեղինակային դասախոսությունների փաթեթը (2025), որը հասանելի է էլեկտրոնային ձևաչափով (պրեզենտացիաներ և տեքստային թեզիսներ)։

Տրամադրվում են նաև համառոտ կոնսպեկտներ և թեմատիկ սխեմաներ։ Ուսանողներին խրախուսվում է վարել սեփական կոնսպեկտներ։

Էլեկտրոնային ռեսուրսներ

- էլեկտրոնային գրադարանային համակարգեր («Arlis», «Irtek» «Datalex» և այլ իրավական տվյալների բազաներ)՝ նորմատիվ ակտերի և մասնագիտական գրականության որոնման համար,
- համալսարանի ուսումնական հարթակում տեղադրված պրեզենտացիաներ, գործնական առաջադրանքներ և մեթոդական ցուցումներ,
- լրացուցիչ առցանց աղբյուրներ՝ դատական պրակտիկայի և օրենսդրական մեկնաբանությունների ուսումնասիրման համար։

Գլոսարի

Դասընթացը ներառում է հիմնական իրավաբանական տերմինների բառարան (օր.՝ «իր», «իրային իրավունք», «սեփականության իրավունք», «սերվիտուտ», «հիպոթեք» և այլն), որը կցված է ուսումնամեթոդական նյութերին։

Այլ նյութեր

Անհրաժեշտության դեպքում տրամադրվում են լրացուցիչ օժանդակ նյութեր՝ համեմատական աղյուսակներ, ինչպես նաև իրավական փաստաթղթերի օրինակներ (օր.՝ անշարժ գույքի առքուվաճառքի, գրավի պայմանագրեր)։